



Փոքր և Միջին Բիզնեսի Հիմնադրամ

ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4

Պետական գրանցման վկայական N 03 Ա. 070280

Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

2008 թվականին իրականացրած գործունեության վերաբերյալ

Իր առաքելության շրջանակներում Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է իրականացնել շահառուների համախմբմանը, շահերի պաշտպանությանը և իրազեկմանն ուղղված ծրագրեր:

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության գործունեության համար բարենպաստ և քաղաքակիրթ միջավայրի ձևավորման նպատակով «Փոքր և Միջին Բիզնեսի Հիմնադրամը» (ՓՄԲՀ) 2008 թ.-ին սերտորեն համագործակցել է իր նախաձեռնությամբ ձևավորված Բիզնես շահերի պաշտպանության, «Ազգային ժողով – ՀԿ համագործակցություն» ոչ ֆորալ ցանցերի, երկրի օրենսդիր և գործադիր պետական կառույցների, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների հետ:

Կազմակերպությունը ներկայացված է ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կից գործող հանրային խորհուրդների, ինչպես նաև «Հազարամյակի մարտահրավերներ/Հայաստան»-ի շահառուների խորհրդի կազմում:

Կազմակերպությունը գործունեություն է ծավալել 2008թ. երկրում կայացած նախագահական ընտրություններին մասնավոր հատվածը ներկայացնող ընտրագանգվածի համախմբման և ընտրություններին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու ուղղությամբ:

ՓՄԲՀ-ն շարունակել է աջակցել Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, օգնելով ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչներին կիսելու իրենց գիտելիքներն ու փորձը, խրախուսելով նրանց զարգացնելու փոխշահավետ համագործակցություն և ամուր գործընկերային հարաբերություններ հանուն իրենց իրավունքների և շահերի պաշտպանության:

Հաշվետու տարում կազմակերպությունը իրականացրել է իր գործունեությունը հետևյալ հիմնական ուղղություններով.

- ՀՀ համայնքների գործարար ներուժի, գործարար միջավայրի, գործող ենթակառույցների աշխատանքի, գործարարության զարգացման ինստիտուցիոնալ խոչընդոտների փորձագիտական գնահատում:
- Կայուն զարգացման ծրագրի մասնակցային գործընթացի շրջանակներում գործարար և ներդրումային միջավայրի զարգացմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում:
- Տարբեր սոցիալական խմբերի ինքնագրադավածության համար պայմանների ապահովմանն ու աղքատության կրճատմանն ուղղված միջոցառումների և ծրագրերի մշակում և իրականացում:

- Երկրի քաղաքական-հասարակական կյանքում գործարար համայնքի ակտիվ ներգրավմանն ուղղված նախաձեռնությունների մշակում և իրականացում:
- Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների զարգացմանն ուղղված բարձրորակ մասնագիտական խորհրդատվության, տեխնիկական և տեղեկատվական օժանդակության մատուցում:

Իր գործունեության շրջանակներում Հիմնադրամը երկրի մարզերում կազմակերպել է հանդիպումներ և քննարկումներ տեղի գործարար հանրության ներկայացուցիչների հետ ուրառում առկա խնդիրների և դրանց լուծմանն ուղղված անհարժեշտ համատեղ գործողությունների շուրջ, օժանդակել է փոքր և միջին բազմաթիվ ձեռնարկատերերի՝ նրանց ցուցաբերելով անհրաժեշտ խորհրդատվական, տեղեկատվական եվ ուսուցողական բնույթի աջակցություն:

Տարբեր կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր բազմիցս դիմել են ՓՄԲՀ-ին հատկապես հարկային և մաքսային օրենսդրության վերաբերյալ խորհրդատվության, ձեռնարկության գրանցման մեխանիզմների և բիզնես պլանների մշակման, վարկավորման աղբյուրների, սխեմաների և վարկավորող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության, տեխնիկական օժանդակության /փաստաթղթերի պատրաստման, թարգմանությունների և պատճենահանման ծառայությունների/ խնդիրներով, որոնց մատուցվել են պատշաճ մակարդակի համապատասխան ծառայություններ:

Հաշվետու տարում ՓՄԲՀ-ի գործունեության համար ֆինանսական աղբյուր են հանդիսացել.

- մատուցված ծառայությունների դիմաց ստացած եկամուտները,
- հիմնադիրների ներդրումներն ու նվիրատվությունները,
- միջազգային դոնոր կազմակերպությունների դրամաշնորհները:

Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը կազմել է. 34 228 889 դրամ, որոնցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը կազմել է. 33 704 814 դրամ:

Հիմնադիրները, հոգաբարձուների խորհրդի անդամները և հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձինք հաշվետու տարվա ընթացքում հիմնադրամի միջոցներից և ծառայություններից չեն օգտվել: